մէջ կը գտնուէինք. սակայն մարդուս գիրքը, թէ պէտք ժամանակ մը կապուած և անազատ ևս լինի, այլ միտքն միշտ ազատ է. եթէ այն միջոցին մարմնով Ենիգալէի նեղուցին դիմաց անգործ սպասելու դատապարտուած էի, այլ մտացս համար չկար արգելք Նախիջևան երթալ գալ, նոյնպէս մինչև ցհեռաւորն Անի։ Այլ հանգամանք պարագայից չատ չհեռացուցին միտքս այդ ափունքէն։ Կը ներեն ինձ անշուշտ արգոյ ընթերցողք, եթէ ես աստ մտացածին ցնորիք հայ ճանապարհորդի՝ սակաւ մի զբաղեցնեմ զիրենք, մինչև որ զմեզ կրելի նաւն գայ։

Անձին փորձով անշուշտ ամեն ոք գիտէ, թէ շատ անգամ մի վանկ, մի բառ, մի անուն՝ մարդուս միտքը որ տեղուանք կը տանի. իմ դիմացս մի պատմական մեծ անուն, լերին յատկացեալ, կանգնած կեցած էր, Միհրդատայ Եւպատորի փեսայի կամ քեռառն՝ մերս քաջին Տիգրանայ Արշակունւոյ։ Ի պատմութենէ գիտեմք՝ որ Միհրդատ Եւպատոր տիրած է Թերակղզւոյս, փրկչին Թուականէն 80 տարի առաջ, Ֆերսոնիսեան հզօր հասարակապետութեունը, Վոսփորեան Թագաւորութեան հետ 'ի միասին, որոյ մայրաքաղաքը դիմացս կեցած էր, մարզ կացուցանելով իւր աշխարհին կամ Թագաւորութեան Պոնտոսի։

Կերջի հին անունն Պանտիկապէոն է, քաղաքհինգ-բազնաց. ե՞րբ կամ յորո՞ց կրած է այդ անուանափոխութիւնը, յայդմ զանազանին կարծիք գիտնոց։ Այլ ես Տիգրանայ փեսին վրայ կը աքանչանայի մտաք, որ 2000 տարի անցնելէն վերջանգամ՝ կը տիրէր երկուց ծովուց Սևին և Ազովու, լեռնահանգէտ անուամբն։ Արդեօք, կ'որոճայի մտաք Թուրքաց Կէչ (անցք) բա՞ռն է, որ այս քաղաքս կը